

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2017-2018 ուս. տարվա  
գիտական խորհրդի նիստի

ք.Երևան

01 հունիսի 2018թ.

**Ներկա էին՝** գիտխորհրդի 24 անդամներից 22-ը (ներկայաթերթիկը կցված է):  
**Նախագահ՝** ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ., պրոֆ. Ա. Սաղյան  
**Գիտական քարտուղար՝** ք.գ.թ. Ա. Դադայան

**ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝**

1. Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմտեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ Հայկ Ռազմիկի Պետրոսյանի ատեստավորման հարցը: Զեկուցող՝ Ա. Սաղյան
2. Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմքիմիայի և ֆարմակագնոգիայի ամբիոնի ասիստենտ, ք.գ.թ. Աննա Մկրտչյանի կողմից ներկայացված «Պեպտիդներ, ֆերմենտներ» վերնագրով ուսումնամեթոդական աշխատանքը տպագրության երաշխավորելու հարցը: Զեկուցող՝ Ա. Սաղյան
3. Ֆարմացիայի ինստիտուտի ուսանողական գիտական ընկերության տարեկան հաշվետվության քննարկում և հաստատում: Զեկուցող՝ ՈւԳԸ նախագահ Մելանյա Ղազարյան
4. Ընթացիկ հարցեր:
  - 2017-2018 ուս. տարվա առաջին կիսամյակում անցկացված «Դասախոսը ուսանողի աչքերով» սոց. հարցման արդյունքների քննարկում:  
Զեկուցող՝ Ա. Սաղյան

## **ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝**

Գիտխորհրդի նախագահ Ա. Սաղյանը նիստը սկսեց շնորհավորանքի խոսքով՝ ուղղված Ֆարմացիայի ինստիտուտի փոխտնօրեն ք.գ.թ., դոցենտ Սամվել Վարդապետյանին: Նա նշեց, որ Ս. Վարդապետյանն արժանացել է ԵՊՀ շնորհակալագրի՝ դպրոցականների առարկայական օլիմպիադայի կազմակերպման և անցկացման գործում մեծ աջակցություն ցուցաբերելու համար: Գիտխորհրդին ներկա գտնվողները ևս շնորհավորեցին Ս. Վարդապետյանին:

Հաջորդիվ նիստը շարունակվեց օրակարգի համաձայն:

### **1. Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմտեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ Հայկ Ռազմիկի Պետրոսյանի ատեստավորման հարցը:**

**Լսեցին՝** Ֆարմացիայի ինստիտուտի տնօրենի պաշտոնակատար Ա. Սաղյանին, ով հաղորդեց, որ հարցը քննարկվել է Ֆարմտեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնում, և հաշվի առնելով ասպիրանտի կողմից կատարված աշխատանքները, ամբիոնը երաշխավորել է ատեստավորման (քաղվածքը կցվում է): Ա. Սաղյանը նշեց, որ ուսուցման առաջին տարում ասպիրանտը հանձնել է կրթական բաղադրիչի «Պարտադիր դասընթացներ և քննություններ» բաժնից ստուգաքններ՝ մասնագիտական օտար լեզու և գիտական հետազոտությունների մեթոդաբանություն առարկաներից, ինչպես նաև «Ընտրովի դասընթացներ և ստուգաքններ» բաժնից՝ գիտության փիլիսոփայություն, հոգեբանություն, մարդկային և նյութական ռեսուրսների կառավարում, գիտական և գործարար գրագրություն և հաղորդակցում առարկաներից: Նա հավելեց նաև, որ Հայկ Պետրոսյանը 2017/2018 ուս. տարում իր ղեկավար ք.գ.դ. Ս. Դադայանի անմիջական մասնակցությամբ «Դեղերի արտադրության տեխնոլոգիա» առարկայի շրջանականերում վարել է նաև սեմինար պարապմունքներ և լաբորատոր աշխատանքներ՝ 36 ժամ տևողությամբ:

Ասպիրանտ Հայկ Պետրոսյանը մասնակցել է 1 միջազգային գիտաժողովի, ունի տպագրված 2 հոդված (ևս 1 հոդված գտնվում է տպագրման փուլում) և միջազգային գիտաժողովի 2 թեզիս:

**Ելույթ ունեցավ՝** Ֆարմտեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնի վարիչ կ.գ.թ., դոցենտ Ա. Հովհաննիսյանը, ով փաստեց, որ ամբիոնում կայացած նիստում ասպիրանտ Հ.

Պետրոսյանը մանրամասն ներկայացրել է ասպիրանտուրայում ուսուցման առաջին տարում կատարած աշխատանքները, կատարել է աշխատանքային պլանով նախատեսված ծրագրերը, դրսևորել է իրեն որպես աշխատասեր և պրպտող անձնավորություն:

**Որոշեցին՝** (միաձայն) հաշվի առնելով Ֆարմտեխնոլոգիայի և ՖԵԿ-ի ամբիոնի կարծիքը՝ ատեստավորել ասպիրանտ Հայկ Ռազմիկի Պետրոսյանին:

**2. Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի ասիստենտ, ք.գ.թ. Աննա Մկրտչյանի կողմից ներկայացված «Պեպտիդներ, ֆերմենտներ» վերնագրով ուսումնամեթոդական աշխատանքը տպագրության երաշխավորելու հարցը:**

**Լսեցին՝** Գիտական խորհրդի նախագահ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Սաղյանին, ով ներկաներին տեղեկացրեց, որ անհրաժեշտ է տպագրության երաշխավորել Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի ասիստենտ, ք.գ.թ. Աննա Մկրտչյանի կողմից ներկայացված «Պեպտիդներ, ֆերմենտներ» վերնագրով ուսումնամեթոդական աշխատանքը: Նա նշեց, որ աշխատանքը քննարկվել է ամբիոնում, առկա է մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը (քաղվածքը կցվում է), այն ուղարկվել է նաև արտաքին գրախոսության ՀՀ ԳԱԱ Հայկենսատեխնոլոգիա ԳԱԿ ՊՈԱԿ: Արտաքին գրախոս, սպիտակուցային կենսատեխնոլոգիաների լաբորատորիայի վարիչ կ.գ.թ. Արթուր Համբարձումյանը ընդգծում է ուսումնամեթոդական աշխատանքի կարևորությունը և գտնում է, որ այն անհրաժեշտ է բնական միացությունների քիմիա առարկայի լաբորատոր աշխատանքներն իրականացնելու համար և կարելի է երաշխավորել տպագրության:

**Որոշեցին՝** Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհուրդը միաձայն որոշեց.

- ✓ Հաշվի առնելով վերոհիշյալ աշխատանքի անհրաժեշտությունն ուսումնական գործընթացի համար, այն թույլատրել տպագրության (100 օրինակ տպաքանակով), համալսարանի միջոցների հաշվին:

**3. Ֆարմացիայի ինստիտուտի ուսանողական գիտական ընկերության տարեկան հաշվետվության քննարկում և հաստատում:**

**Լսեցին՝** Ֆարմացիայի ինստիտուտի ուսանողական գիտական ընկերության նախագահ Մելանյա Ղազարյանին, ով գիտխորհրդի անդամներին ներկայացրեց

ՈԻԳԸ- կազմը, նշեց, որ ընկերության կազմում ընդգրկված են 11 անդամներ և 9 ակտիվիստ, ովքեր մասնակցում են ՈԻԳԸ-ն աշխատանքներին: Նա նշեց, որ 2017-2018 ուս. տարվա ընթացքում ուսանողական գիտական ընկերության կողմից կազմակերպվել են 32 միջոցառումներ, այդ թվում՝ այցելություններ, գիտաժողովներ և սեմինար-քննարկումներ: Մ. Ղազարյանն իր շնորհակալանքի խոսքն ուղղեց Ֆարմացիայի ինստիտուտի փոխտնօրեն Ս. Վարդապետյանին, ում անմիջական աջակցության շնորհիվ ուսանողական գիտական ընկերության անդամները հնարավորություն ունեցան այցելելու ՀՀ-ում պատշաճ արտադրական գործունեություն (ՊԱԳ) ծավալող Արփիմեդ դեղագործական ընկերություն, մանրամասն ծանոթանալու արտադրական պայմաններին, արտադրվող դեղերի տեսականուն:

**Ելույթ ունեցան՝** Գիտխորհրդի անդամներ Ռ. Հովհաննեսյանը, Ն. Հովհաննիսյանը, Հ. Միմոնյանը, Ա. Մկրտչյանը, ովքեր կարևորեցին այն հանգամանքը, որ ուսանողական գիտական ընկերությունը, սկսած ուսումնառության առաջին տարվանից, ուսանողությանը պետք է ծանոթացնի Ֆարմացիայի ինստիտուտի 3 ամբիոնների ուղղվածություններին՝ խթանելով նրանց մոտ գիտության նկատմամբ հետաքրքրության զարգացմանը: Նրանք շեշտեցին, որ այդ հարցում պետք է լինի նաև ակտիվ համագործակցություն ուսանողական խորհրդի հետ:

**Որոշեցին՝** դրական գնահատել ուսանողական գիտական ընկերության կողմից կատարված աշխատանքները:

#### **4. Ընթացիկ հարցեր:**

Նիստում ընթացիկ հարցեր չեն քննարկվել:

Գիտական խորհրդի նախագահ՝  
տնօրենի պաշտոնակատար,  
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ, պրոֆ.

Ա. Սաղյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ ք.գ.թ.

Ա. Դադայան